



ԻՍԼԱՄԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ ՏԱՇՔԵՆԴՈՒՄ

Սեպտեմբերի 9—12 օրերին Ուզբեկստանի մայրաքաղաք Տաշքենդում տեղի ունեցավ Սովետական Միության մուսուլմանների իսլամական կոնֆերանսը՝ Միջին Ասիայի և Ղազախստանի մուսուլմանների հոգևոր խորհրդի նախագահ մուֆթի Զիաուդդինիան Բին Իշան Բաբախանի հրավերով: Կոնֆերանսի բնաբանն էր՝ «Հիջրեթի 15-րդ դարը պետք է լինի աշխարհի խաղաղության և ժողովուրդների միջև բարեկամության դար»:

Կոնֆերանսի աշխատանքներին մասնակցում էին Սովետական Միության տարբեր հանրապետությունների (Ուզբեկստան, Ղազախստան, Տաջիկստան, Կիրգիզիա, Թուրքմենստան, Ադրբեջան), ինքնավար հանրապետությունների (Բաշկիրիա, Թաթարստան, Դաղստան, Չեչենո-Ինգուշիա, Կաբարդինա-Բալկարիա), տարբեր մարզերի ու շրջանների մուսուլմանների պատվիրակությունները, թվով 173 պատգամավոր:

Կոնֆերանսին ներկա էին նաև 71 ներկայացուցիչներ Աֆրիկայի (Ալժիր, Գանա, Լիբիա, Մավրիտանիա, Մալի, Սենեգալ, Սուդան, Տանզանիա, Տոգո, Ուգանդա, Բենին, Գվինեա, Եթովպիա), Ասիայի (Աֆղանստան, Եմենի Արաբական Հանրապետություն, Եմենի Դեմոկրատական Հանրապետություն, Բուվեյթ, Բանգլադեշ, Մոնղոլիայի Ժողովրդական Հանրապետություն, Շրի Լանկա, Պակիստան, Ծապոնիա), Մերձավոր Արևելքի (Հորդանան, Սիրիա, Լիբանան, Թուրքիա, Կիպրոս), Եվրոպայի (Բուլղարիա, Ավստրիա) երկրներից: Բացի այդ, հյուրի հանգամանքով ներկա էին Սովետական Միությունում գործող մուսուլմանական տարբեր հաստատությունների շուրջ 800 ներկայացուցիչներ:

Կոնֆերանսին, որպես դիտորդ, հրավիրված էին և ուղերձներով հանդես եկան Ռուս պրավոսլավ Եկեղեցու, Համառուսական ավետարանական խորհրդի, Վրաց ուղղափառ Եկեղեցու, Լատվիայի լուսերականների, ինչպես նաև Խաղաղության Քրիստոնեական Կոնֆերանսի, Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսի և այլ եկեղեցական հաստատությունների ներկայացուցիչները:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու կողմից ներկա էին Մայր տաճարի լուսարարապետ Ս. Հուսիկ արքեպ. Սանթուրյանը և Գերագույն հոգևոր խորհրդի անդամ տիար Հովհաննես Թոփուզյանը:

Կոնֆերանսում վեց լեզվով (հայերեն, արաբերեն, ռուսերեն, ուզբեկերեն, ֆրանսերեն, անգլերեն) հրապարակվեց Ս. Ս. Վազգեն Ա Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց կաթողիկոսի ողջույնի հետևյալ խոսքը՝ ուղղված իսլամական կոնֆերանսի մասնակիցներին:

5 սեպտ. 80 թ.

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ

ՄՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐԻ ՄԵԾ

ԿՈՆՖԵՐԱՆՍԻՆ ԵՎԻՐՎԱԾ ՀԻԾՐԵԹԻ
ՀԱԶԱՐՀԻՆԳՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԻՆ

Հարգարժան եղբայրներ Մեր,

Հայ Առաքելական Եկեղեցու և Սովետական Հայաստանում ու արտասահմանում ապրող հայ հավատացյալների անունից, ուրախ սրտով ողջունում ենք ձեր կոնֆերանսը, որ հավաքված էք ոգևորչելու մեծ հիշատակը Մուհամեդ մեծ մարգարեի, որ մեր օրերի հոգևոր-բարոյական արժեք ու

այժմեություն է ներկայացնում ոչ միայն իսլամական աշխարհի համար, այլ նաև համայն մարդկության՝ հատկապես իր խաղաասիրական և մարդասիրական պատգամներով:

Մենք հավատում ենք, թե բոլոր պատմական կրոնները և կրոնական կազմակերպությունները, որոնք դավանում են միևնույն Աստծուն, պետք է իրար մոտենան, իրար ավելի լավ ճանաչեն ու զնահատեն. և ձեռք-ձեռքի տված միատեղ աղոթեն ու գործեն, որպեսզի մեր օրերի ժողովուրդներն ու պետությունները գտնեն և ամրապնդեն խաղաղ գոյակցության, համերաշխ գործակցության ուղիները՝ հերջանկություն աշխարհի բոլոր մարդկանց:

Վստահ ենք, թե այս մարդասիրական ազնիվ ճանապարհին ձեր կոնֆերանսի որոշումներն ու միջոցառումները կարևոր մի նպաստ պիտի հանդիսանան:

Մաղթում ենք ձեր աշխատանքներին լիակատար հաջողություն Բարձրյալն Աս-

տուծո օգնականությամբ:
Եղբայրական սիրով՝

Վ Ա Ջ Գ Ե Ն Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԶ ԵՎ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Կոնֆերանսում լսվեցին տարբեր մայրցամաքների մուսուլմանական ժողովուրդների սոցիալ-տնտեսական վիճակը և քաղաքական տրամադրություններն արտահայտող բազմաթիվ զեկուցումներ, հաղորդումներ:

Կոնֆերանսի աշխատանքներն ավարտվելուց հետո տարբեր երկրներից հրավիրված հյուրերին հնարավորություն տրվեց այցելելու Բուխարա, Սամարղանդ, Ալմա Աթա և այլ քաղաքներ: Նրանք այդ վայրերում ծանոթացան Սովետական Միության մուսուլմանների մշակույթի և տնտեսական նվաճումներին, կենցաղին:

